

**Տ ե ղ ե կ ա տ վ ու թ յ ու ն**  
**2015 թվականի Սփյուռքի հայկական համայնքների,**  
**կառույցների, կազմակերպությունների կամ անհատների**  
**մասնակցությամբ ՀՀ Լոռու մարզում իրականացված**  
**միջոցառումների, ծրագրերի կամ այլ աշխատանքների վերաբերյալ**

- ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ, Լոռու մարզպետարանի և Վանաձոր և Վարդաբլուր համայնքների աջակցությամբ՝ Վանաձոր և Վարդաբլուր համայնքներում կազմակերպվել է «Երգում ենք Կոմիտաս» համահայկական փառատոնը, որը կազմակերպվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում: Միջոցառմանը մասնակցել են՝ ՌԴ հարավային թեմի «Սբ.Գրիգոր Լուսավորիչ» երգչախումբը, Թբիլիսիի «Հայաստուն» մշակույթի կենտրոնի «Ներսես Շնորհալի» երգչախումբը, ՌԴ Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի «Զանգեր» երգչախումբը, ՌԴ Արմավիր քաղաքի «Արմավիր» պարախումբը, Վիրահայոց թեմի «Աղբյուր» երգչախումբը, անհատ կատարողներ Բեյրութից, Գերմանիայից, Շվեդիայից, Էստոնիայից և այլ երկրներից:
- Դանիայի Թագավորությունում ՀՀ դեսպանության և «Հայ փոքրիկ երգիչներ» ասոցիացիայի նախաձեռնությամբ, Հայոց Մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում, Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի համերգասրահում կազմակերպվել է Դանիայի Յուլյանդի շրջանի Հերնինգ քաղաքի «Միդվեստ» աղջիկների երգչախմբի համերգը: Համերգը նվիրված է եղել դանիացի միսիոներներ Մարիա Յակոբսի և Քարեն Յեփփեի հիշատակին, ովքեր 1915-ին փրկել են հազարավոր հայ երեխաների՝ հավաքելով նրանց մեկ որբանոցում:
- Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանում կազմակերպվել է թուրք գրող Քեմալ Յալչընի հանդիպումը դասախոսների, գրողների, արվեստագետների և բուհի ուսանողների հետ: Թուրք գրողը ներկայացրել է հիմնականում իր «Հոգիս ձեզմով կը խայտայ» գրքի հրատարակման և բովանդակության մասին:  
Համանուն վերնագրով թատերականացված ներկայացում է տեղի ունեցել Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում՝ ԱՄՆ-ի Նյու Յորքի հայկական թատերախմբի արտիստների ներկայացմամբ:
- Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից 2015թ.-ից իրականացվող «Սիրիահայերի ինտեգրման խթանում» ծրագիրը ընդգրկում է Երևան քաղաքը, Արմավիրի, Արարատի, Լոռու, Կոտայքի, Շիրակի և Արագածոտնի մարզերը, որտեղ բնակություն են հաստատել սիրիահայեր: Ծրագիրը կտևի մինչև 2017թ. փետրվարը, ֆինանսավորող կողմն է Եվրապական միությունը և Ավստրիական Կարմիր Խաչի ընկերությունը, աջակցող կառույցներն են «Առաքելություն

Հայաստան» և «Սեյվ դը չիլդրեն» ԲՀԿ-ները, «Կազա» շվեյցարական հիմնադրամը, Հայաստանի փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոնը, «ՓՄՁ համագործակցային ասոցիացիա» ՀԿ-ն, իսկ համագործակցող կողմերն են մարզպետարանները, տեղական ինքնակառավարման մարմինները, ակտիվ ՀԿ-ները: ՀՀ Լոռու մարզում 09.11.2015թ. դրությամբ բնակվում են սիրիահայերի 11 ընտանիքներ, որոնք տեղաբաշխված են Վանաձորում, Ալավերդի, Սպիտակում և Ստեփանավանում:

- ՀՀ Լոռու մարզին Ֆրանսահայ բժիշկների միության Փարիզի մասնաճյուղի կողմից 2011թ. տրամադրվեց շարժական ստոմատոլոգիական կլինիկա, որի միջոցով անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն և սպասարկում են ստանում մարզի 0-18 և 60-ից բարձր տարիքի անձինք: Շարժական կլինիկան հերթականությամբ կայանվում է մարզի բոլոր պոլիկլինիկաներում, առողջության առաջնային պահպանման կենտրոններում և ամբուլատորիաներում՝ սպասարկելով նաև նրանց կազմի մեջ գտնվող բուժակ մանկաբարձական կետերի սպասարկման տարածքի բնակչությանը: Շարժական կլինիկան ավարտել է Մարգահովիտ, Գուգարք, Դսեղ, Լեռնապատ, Գարգառ համայնքների բնակչության ստոմատոլոգիական սպասարկումը, այժմ տեղակայվել է Գյուլագարակ համայնքում՝ միաժամանակ սպասարկելով հարակից համայնքների բնակչությանը:
- 2015թ. Սփյուռքի հայկական համայնքների, կառույցների, կազմակերպությունների կամ անհատների մասնակցությամբ ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված միջոցառումների, ծրագրերի կամ այլ աշխատանքների վերաբերյալ ստորև ներկայացվում է սեղմագրությունը.

**Արդվիի հիմնական դպրոց** - Արդվի գյուղի բնակիչ Գևորգ Շավարշի Կիրակոսյանը /բնակվում է Արաբական էմիրություններում/ 2015-2016 ուստարում աշակերտները ապահովվել են տաք հագուստով և կոշիկներով:

**Նեղոցի հիմնական դպրոց** - ՌԴ Օդեսցովո քաղաքի բնակիչ Վահան Բեգջանյանը 2015թ. Նեղոցի Ա. Բեգջանյանի անվան հիմնական դպրոցին նվիրել է երաժշտական նվագարկիչ և դասասենյակների վերանորոգման համար չորս դուռ:

**Կուրթանի դպրոց** - Դպրոցում 2015թ. գործում է մանկապատանեկան պարի խմբակ, որը հովանավորում է ՌԴ-ի Դոնի Ռոստովի հայ համայնքը /Նախաձեռնող՝ Ալվարդ Թամարյան/ և ֆուտբոլի խմբակ, որը հովանավորում է Միշա Դարբինյանը /ՌԴ քաղաքացի/:

**Ստեփանավանի թիվ 6 միջնակարգ դպրոց** - Երևանի «Թեքեյան կենտրոնում» կազմակերպվել են՝

- օլիմպիադաներ «Հայոց լեզու», «Գրականություն», «Անգլերեն», «Մաթեմատիկա» առարկաներից:

- Կենտրոնի հովանավորությամբ էքսկուրսիաներ են կազմակերպվել Հայաստանի պատմական վայրերով:
- Դպրոցի շուրջ 16 աշակերտ իրենց ամառային հանգիստն են անցկացրել Հայաստանի տարբեր ճամբարներում:
- Անապահով ընտանիքների շուրջ ութանասուն աշակերտ ապահովվել է դասագրքերով:

**Սպիտակի թիվ 2 հիմնական դպրոց** - 2015թ. Սփյուռքի հայկական համայնքների մասնակցությամբ իրականացված միջոցառումներ իրականացվել են ֆրանսահայ «Հոյս Հայաստանի» հիմնադրամի կողմից /ֆրանսահայ ժիլպեր Լևոնյան/:

Հիմնովին վերանորոգվել է Սպիտակի Դ.Տեր-Սիմոնյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի սանհանգույցները, ջեռուցման համակարգը և շահագործման է հանձնվել մարզահրապարակը: 2016թ նախատեսված է դպրոցի ներքին հարդարման աշխատանքներ:

**Դարպասի միջնակարգ դպրոց** - Ամերիկայի Հայ կրթական հիմնարկությունը 2015թ. ավարտեց դպրոցի երրորդ մասնաշենքի հիմնանորոգումը, փոխվեց դպրոցական հին կահույքը՝ նորով: Երկրորդ անգամ պատվիրակությունը այցելեց ծանոթանալու շինարարների վերջնական աշխատանքին, իրենց հետ բերել էին գնդակներ և հագուստ:

Դպրոցի IV-VIII դասարանում սովորողները մասնակցեցին բարերարների կողմից կազմակերպած նկարչական մրցույթին: 2016թ. համագործակցությունը կշարունակվի:

- «Դիակոնիա» հայ- շվեցարական հիմնադրամը մեծ ծավալով աշխատանքներ է իրականացնում Լոռու մարզի 40-ից ավելի համայնքներում, այդ թվում՝ Դսեղի առողջության կենտրոնին տրամադրել է հեռահար բժշկության կազմակերպման համար համակարգիչներ, բժշկական սարքավորումներ, Այրում համայնքում կազմակերպել է ծառատունկ, Սարամեջ, Զրաշեն համայնքներում իրականացրել է գարու, ցորենի, հաճարի և կարտոֆիլի մշակման աշխատանքներ, բազմազավակ և սոցիալապես անապահով 800-ից ավելի ընտանիքներ օգտվել են սննդի և տաք հագուստի ծրագրից, Թումանյան համայնքում ձեռնարկվել է ծերատուն, 60-ից ավելի անապահով ընտանիքների երեխաների, ինչպես նաև սիրիահայ երեխաների համար կազմակերպվել է ամառային հանգիստ Վահագնաձորի Գուգարք ճամբարում:
- Թումանյանի տարածաշրջանի Դեբեդ գյուղի մերձակայքում տեղի ունեցավ ոչ միայն Լոռու մարզում, այլև հանրապետությունում եզակի ուսումնական մի նոր հաստատության հիմնարկեքի արարողություն: «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի միջոցներով կառուցվելու է նորարար կրթական հանգույցի՝ «Սմարթ» կենտրոնի առաջին մասնաշենքը:

- «Հայաստանի Մանուկներ Հիմնադրամի» և ՎիվաՍել ընկերության աջակցությամբ Թումանյան և Դսեղ համայնքներում հիմնադրվել է ժամանակակից տեխնոլոգիապես հագեցած արտադրամասեր:
- 2015 թվականին Վանաձորի քաղաքապետի հովանավորությամբ Բաթումի քաղաքում տեղադրվել է երկու խաչքար՝ նվիրված 1915թ. Մեծ եղեռնի 100-ամյակի հիշատակին և հայ-վրացական բարեկամությանը: Վանաձորի «Հորովել» երգի-պարի համույթը համերգով հանդես է եկել Աջարիայի Հանրապետության Բաթումի քաղաքում:
- 2015թ. հունիսի 12-15-ը Վանաձորում են եղել Աջարիայի հայերի միության մինի ֆուտբոլի հավաքականի և մարմնամարզության թիմերը: Նմանատիպ միջոցառումներ են իրականացվել նաև Աջարիայի Բաթումի քաղաքում:
- Սպիտակի քաղաքապետարանի և Վրաստանի Աջարիայի ինքնավար հանրապետության Խելվաչաուրի մարզի հետ համագործակցության շրջանակներում, Աջարիայի հայերի միության շնորհիվ 2015 թվականին Սպիտակի քաղաքապետարանը ցուցաբերել է աջակցություն Բաթումիի հայկական դպրոցի պահպանման, ուսումնական ծրագրերի ձեռքբերման ինչպես նաև Բաթումիի հայկական ֆուտբոլային թիմի ընկերական հանդիպումների կայացմանը Հայաստանում:
- «Հույս Հայաստանին» կազմակերպությունը և «Հայ ավետարանչական ընկերակցություն» կազմակերպությունը Սպիտակի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ և մի խումբ ֆրանսիացի և ֆրանսիաբնակ հայ բարերարների աջակցությամբ 15 տարի առաջ հիմնդրված բարեգործական մանկական բուժարանի համար իրականացրել է նորացման ծրագիր, վերանորոգվել է բուժհաստատությունը և հագեցվել նորագույն բուժ-սարքավորումներով: Հոկտեմբերի 22-ին կայացավ բուժհաստատության հանդիսավոր բացումը, որին ներկա էին «Հույս Հայաստանին» կազմակերպության ներկայացուցիչ Ժյուբերտ Լևոնյանը, Ֆրանսիայի հայ բժիշկների միության նախագահ Միշել Շահինյանը, «Հույս Հայաստանին» կազմակերպության, Ֆրանսիայի հայ բժիշկների միության անդամներ:
- 2015թ հոկտեմբերի 22-ին Սպիտակ քաղաքում հանդիսավորությամբ բացվեց թիվ 2 դպրոցի մարզահրապարակը, որը կառուցվել էր «Հույս Հայաստանին» կազմակերպության նախաձեռնությամբ և Ֆրանսիայի Լուարի շրջանի պատգամավոր Ֆրանսուա Ռոշբլուանի, ինչպես նաև Ֆրանսիայի համահայկական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:
- Սանկտ Պետերբուրգի բնակիչ Հրաչ Պողոսյանի հովանավորությամբ Եղեռնի 100-ամյակին նվիրված խաչքար է տեղադրվել Ստեփանավան քաղաքում:
- «Երկիր և մշակույթ» համազգային կազմակերպության հովանավորությամբ, Հայկ և Հիդա Մանիշակյանների բարերարությամբ, Շիրականուտ համայնքում իրականացվել է Չիխանավանքի վերականգնման աշխատանքներ և 2015թ.

օգոստոսի 22-ին հովանավորների մասնակցությամբ տեղի է ունեցել Չիչխանավանքի օժման արարողությունը:

- «Լույս» հիմնադրամի կողմից կազմակերպված «Ձարգացնենք Հայաստանը միասին» ծրագրի շրջանակներում 2015թ. հուլիսի 13-24-ը ԱՄՆ-ից և Միացյալ Թագավորությունից ժամանած մի խումբ ուսանողներ՝ Տաշիրի քաղաքապետարանի աջակցությամբ իրականացրեցին կրթական, մշակութային և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ծրագրեր:
- Շվեցարաբնակ նախկին լեռնապատոցի Արփիկ Քամայանը գյուղի միջնակարգ դպրոցի առաջին դասարանի աշակերտներին նվիրել է պայուսակներ, գրենական պիտույքներ և մարզական հանդերձանք իսկ Մոսկվաբնակ գործարար Լեռնապատ համայնքի բնակիչ Կարեն Աշրաֆյանը Լեռնապատ համայնքում նոր կառուցվող մարզասրահին նվիրել է մարզական գույք: Մոսկվաբնակ լեռնապատոցի մի խումբ գործարարները դրամական օգնություն են տրամադրել Լեռնապատի միջնակարգ դպրոցին և Լեռնապատ առողջության կենտրոնին նվիրել են պատճենահանման սարքեր:
- 2015թ. հոկտեմբերին Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի Լոմոնոսովի պետական համալսարանի համաշխարհային մշակույթային բաժնի վարիչ, բյուզանդագետ Ալեքսեյ Միխայելովիչ Լիդովի և մոսկվայաբնակ՝ Ախթալա համայնքի բարերար Նորայր Բլուդյանի մասնակցությամբ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Ախթալա համայնքում հանրությանը ներկայացվել է «Ախթալայի որմնանկարները» մեծարժեք մենագրությունը:
- Արևաշող համայնքում, «Հույս Հայաստանին» կազմակերպության և Ֆրանսիայի Պրովանս Ալպեր Լազուրի Ափ ռեգիոնալ խորհրդի աջակցությամբ համայնքային կենտրոնում բարեկարգվել է փոքրիկ տարածք, որն այսուհետ կձառայի որպես բարեգործական ատամնաբուժարան երեխաների համար: Ատամնաբուժարանը կահավորվել է անհրաժեշտ բուժասարքավորումներով և պարագաներով: Բարեգործական ծրագրերը շարունակվելու են հետագայում:
- Բազում համայնքին իր բարեգործական ծրագրերով անհրաժեշտ գույք ձեռք բերելու համար մանկապարտեզին աջակցության ձեռք մեկնեց ծնունդով բազումցի բարերար Կամո Գևորգյանը (ՌԴ):

## **2016 թվականի սփյուռքի հայկական համայնքների, կառույցների, կազմակերպությունների մասնակցությամբ ՀՀ Լոռու մարզում նախատեսվող միջոցառումների և ծրագրերի ցանկ**

- 2016թ. լրանում է Ախթալայի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու կառուցման 800-ամյակը: Նախատեսված միջոցառումներին մասնակցելու համար հրավիրվելու են հյուրեր Ռուսաստանի Դաշնությունից, Վրաստանի հանրապետությունից, Հունաստանի հանրապետությունից, Ֆրանսիայից ու Գերմանիայից:
- Ամերիկայի հայ կրթական հիմնարկության և նրա անդամների, անհատների մասնակցությամբ Դարպաս համայնքի միջնակարգ դպրոցում 2014-2015թթ. ընթացքում կատարվել է վերանորոգման աշխատանքներ: 2016թ. նախատեսվում է համագործակցությունը նրանց հետ
- 2016թ. մշակույթի և սպորտի բնագավառում նախատեսվում է շարունակել Վանաձոր քաղաքի համագործակցությունը Բաթումի (Աջարիա), Կիսլովոդսկ (ՌԴ), Պոդոլսկ (ՌԴ), Վիտեբսկ (Բելառուսիա), Բանյո (Ֆրանսիա), Փասադենա (ԱՄՆ) քույր քաղաքների հետ:
- «Միլենիում» հիմնադրամը մշակութային ժառանգության զարգացման «CHOICE» միջազգային նախագծի ներկայացման նպատակով ՀՀ Լոռու մարզպետարանում հանդիպում է կազմակերպվել մարզպետարանի աշխատակազմի, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի շահագրգիռ կառույցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Ծրագրերի տևողությունը 6-14 ամիս է և մեկնարկը կտրվի 2016թ. մարտից:
- Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից 2015թ.-ից իրականացվող «Սիրիահայերի ինտեգրման խթանում» ծրագիրը կշարունակվի մինչև 2017թ. փետրվարը:
- ՀՀ Լոռու մարզին Ֆրանսահայ բժիշկների միության Փարիզի մասնաճյուղի կողմից 2016թ. շարժական ստոմատոլոգիական կլինիկական կշարունակի իր անվճար ստոմատոլոգիական բուժօգնությունը և սպասարկումը Լոռու մարզի համայնքներում:
- Ֆրանսահայ «Հույս Հայաստանի» հիմնադրամի կողմից 2016թ նախատեսված է իրականացնել Սպիտակի Դ.Տեր-Սիմոնյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի ներքին հարդարման աշխատանքներ:
- «Հույս Հայաստանին» կազմակերպության և Ֆրանսիայի Պրովանս Ալպեր Լազուրի Աֆ ռեգիոնալ խորհրդի աջակցությամբ Արևաշողի համայնքային կենտրոնում գործող բարեգործական ատամնաբուժարանի բարեգործական աշխատանքները շարունակական են: